

COUNTY OF LOS ANGELES DEPARTMENT OF MEDICAL EXAMINER



1104 NORTH MISSION ROAD, LOS ANGELES, CA 90033

(323) 343-0512: (երկուշաբթի-ուրբաթ, 8:00-ից 17:00)

(323) 343-0714: (օրը 24 ժամ, շաբաթը 7 օր)

me.lacounty.gov

info@me.lacounty.gov



Մենք մեր ամենաանկեղծ ցավակցությունն ենք հայտնում Ձեզ և Ձեր ընտանիքին՝ Ձեր հարազատի կորստի կապակցությամբ: Հուսով ենք, որ այս տեղեկատվությունը կօգնի Ձեզ հաղթահարելու Ձեր վիշտը և կպատասխանի մարմնի հետազոտման գործընթացի և բժշկական փորձաքննիչի դերի վերաբերյալ Ձեր հարցերին:

Բժշկական փորձաքննության վարչության դերը.

Բժշկական փորձաքննության վարչությունն անկախ սուբյեկտ է, որը գործում է իրավապահ մարմիններից առանձին: Մենք ուսումնասիրում ենք մահերը, որոնք տեղի են ունենում Լոս Անջելես վարչաշրջանում և լինում են հանկարծակի, անսպասելի կամ բռնի, կամ երբ մահացածին վերջերս բժշկ չի այցելել (Կալիֆորնիայի կառավարության օրենսգիրք 27491): Դատաբժշկական փորձաքննության միջոցով և գիտական եղանակներով մենք անաչառ կերպով որոշում ենք մահվան պատճառը և ձևը:

Ձեր հարազատի նույնականացում.

Տեսողական նույնականացումն իրականացվում է մահվան վայրում՝ քննիչի կողմից նույնականացման քարտի համեմատությամբ: Որոշ դեպքերում դրական նույնականացման համար կարող են պահանջվել լրացուցիչ դատաբժշկական գործընթացներ, ինչպիսիք են մատնահետքը, ատամնաբուժական կամ ռենտգեն համեմատությունը, բժշկական իմպլանտների կամ սարքերի ուսումնասիրությունը, ԴՆԹ կամ մարդաբանական վերլուծությունը: Մենք չենք առաջարկում դիտման ծառայություններ: Խնդրում ենք կապվել Ձեր՝ թաղման հարցերով տնօրենի հետ՝ թաղման բյուրոյի տարբերակները դիտարկելու համար:

Մարմնի զննում.

Բժշկական փորձաքննիչի տեղակալը կատարում է մարմնի զննում և ուսումնասիրում է հանգամանքները և բժշկական պատմությունը՝ պարզելու մահվան պատճառն ու ձևը: Ներքին օրգանների փոքր նմուշները (բիոպսիաներ) կարող են հետազոտվել, իսկ մարմնի հեղուկների նմուշները կարող են պահպանվել և փորձարկվել՝ դեղերի և այլ նյութերի առկայությունը ստուգելու համար: Երբեմն, անհրաժեշտության դեպքում, հյուսվածքների ավելի մեծ մասեր կամ նույնիսկ ամբողջ օրգաններ կարող են պահպանվել լրացուցիչ կամ մասնագիտացված հետազոտության համար: Որոշ դեպքերում ներքին զննման կարիք չկա մահվան պատճառն ու ձևը պարզելու համար:

Մահվան դատաբժշկական փորձաքննության ընթացքում տեղեկատվության հավաքագրումը կարող է տևել մի քանի շաբաթ կամ ավելի երկար, եթե մահվան պատճառը որոշելու համար պահանջվեն մասնագիտացված լաբորատոր հետազոտություններ: Մահվան պատճառը պարզելուց բացի, այս արդյունքները կարող են կարևոր լինել քաղաքացիական կամ քրեական դատական գործերում: Այս ուղացումները չպետք է խանգարեն, որ մարմինը հանձնվի օրինական մերձավորներին՝ վերջնական թաղման համար:

Հետմահու թունաբանական փորձաքննություն.

Հետմահու թունաբանական փորձաքննությունը բազմաստիճան գործընթաց է, այլ ոչ թե մեկ գործիքով արվող թեստ, ինչպես երևում է կլինիկական միջավայրում, և այն կարող է տևել երեքից վեց ամիս: Հետմահու նմուշները կոագուլյացիայի են ենթարկվում և պահանջում են էքստրակցիոն քայլեր՝ նախքան նմուշը գործիքի վրա օգտագործելը: Դեղերի յուրաքանչյուր դասի նմուշը թեստավորելու համար անհրաժեշտ է օգտագործել բազմաթիվ գործիքներ: Որքան շատ թմրանյութ է հայտնաբերվում մահացածի մարմնում, այնքան երկար է տևում փորձաքննությունը: Սա բնորոշ գործընթաց է բոլոր հետմահու դատաբժշկական թունաբանական փորձաքննությունների համար:

Կրոնական առարկություն դիտարկմանը.

Բժշկական փորձագետների տեղակալները որոշում են դիտարկման անհրաժեշտությունը: Խնդրում ենք անհապաղ դիմել քննիչին, եթե կարծում եք, որ դիտարկմանը հակասում է մահացածի կրոնական համոզմունքներին, և մերժեք դիտարկումը: Մենք կաշխատենք ձեզ հետ՝ փորձելով բավարարել Ձեր ցանկությունները՝ միաժամանակ կատարելով մեր օրինական պարտավորությունները (Կալիֆորնիայի կառավարության օրենսգիրք 27491.3):

Մահացածի պատկանելիքները.

Օրինական մերձավորները կարող են պահանջել մահացածի անձնական իրերի մեծ մասը, որը կալանքի տակ է գտնվում մեզ մոտ: Պետական փաստաթղթերը, ինչպիսիք են վարորդական վկայականները և անձնագրերը, պետք է վերադարձվեն տրամադրող մարմնին տնօրինման համար: Մահացածի պատկանելիքները վերցնելու համար խնդրում ենք երկուշաբթիից հինգշաբթի՝ ժամը 10:00-ից 16:00-ը, այցելել Բժշկական փորձաքննության բաժին՝ 1104 N. Mission Rd., Los Angeles հասցեում: Հավելյալ տեղեկատվության համար՝ խնդրում ենք զանգահարել Անձնական գույքի բաժին՝ (323) 343-0515 հեռախոսահամարով: Հանդիպումներին կարող եք գրանցվել :

Վերջնական հաշվետվություններ.

Վերջնական հաշվետվությունները փաստաթղթեր են, որոնք բացատրում են, թե ինչու է մարդը մահացել: Խնդրում ենք հաշվի առնել, որ մահվան պատճառի և ձևի որոշումը կարող է տևել մի քանի օրից մինչև մի քանի ամիս՝ կախված մահվան հանգամանքներից: Մենք ինքնաբերաբար չենք կապվում օրինական մերձավորների հետ՝ տրամադրելու մեր փորձաքննության արդյունքները, քանի որ գիտակցում ենք, որ Դուք կարող եք չցանկանալ քննարկել մահվան պատճառը: Եթե ցանկանում եք քննարկել արդյունքները, խնդրում ենք զանգահարել մեզ (323) 343-0518 հեռախոսահամարով, որպեսզի հանդիպում նշանակեք բժշկ-փորձագետի հետ, որը կարող է քննարկել որոշումը: Խնդրում ենք գնել վերջնական հաշվետվության պատճենն առցանց՝ me.lacounty.gov կայքում, կամ զանգահարել մեր Գրառումների բաժին (323) 343-0695 հեռախոսահամարով:

Մահվան վկայականներ.

Մենք մահվան վկայականներ չենք տալիս: Հավաստագրված պատճենները կարելի է ձեռք բերել Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնից.

- Հանրային առողջապահության վարչություն (մահվան օրվանից 60 օր)՝ (213) 288-7816
- Քարտուղար-գրանցող՝ (800) 201-8999

Երբեմն մահվան վերջնական վկայականի տրամադրումը կարող է հետաձգվել կամ «ձգձգվել»՝ հետագա հետաքննության սպասելու պատճառով, օրինակ՝ բժշկական գրառումների կամ ոստիկանության գեկույցի վերանայման կամ լրացուցիչ դատաբժշկական փորձաքննության: Հուղարկավորությունը հետաձգելու կարիք չկա, և մահացածը կարող է հուղարկավորվել կամ դիակիզվել փորձաքննությունից հետո, նույնիսկ եթե մահվան պատճառն ու ձևը առկա է: Հուղարկավորության հարցերով տնօրենը կարող է օգնել Ձեզ մահվան վկայականի վերաբերյալ պայմանավորվածությունների և հարցերի շուրջ:

Վետերաններ.

Զինված ուժերում ծառայած, պատվով զորացրված և ծառայության այլ պահանջներին համապատասխանող անձինք կարող են վետերանի հուղարկավորության իրավունք ունենալ: Տեղեկությունների համար խնդրում ենք դիմել Լոս Անջելես վարչաշրջանի ռազմական և վետերանների գործերի գրասենյակ՝ (213) 765-9681 հեռախոսահամարով: Վետերանների կամ սոցիալական ապահովության նպաստների վերաբերյալ լրացուցիչ մանրամասների համար դիմեք Ձեր՝ հուղարկավորության հարցերով տնօրենին:

Տրանսպորտային վճարներ.

Վարչաշրջանից պահանջվում է գնահատել մահացածի տեղափոխման և սպասարկման համար որոշակի վճարների անհրաժեշտությունը: Մենք կարող ենք Ձեզնից գումար գանձել այս ծառայությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դա վետերանի, երեխայի (14 տարեկան և ավելի փոքր) կամ սպանության զոհի մահ է: Խնդրում ենք տրամադրել հաստատագրված եկամտի մասին փաստաթղթեր, եթե չեք կարողանում ծածկել ծախսերը և ցանկանում եք վճարից ազատում պահանջել: Լրացուցիչ տեղեկությունների համար՝ խնդրում ենք զանգահարել (323) 343-0572 հեռախոսահամարով:

Տվյալների գաղտնիություն և տեղեկատվության հրապարակում.

Կալիֆորնիայում մահացած մարդու մահվան պատճառն ու ձևը և դիակիզման գեկույցը համարվում են հանրային գրառում (Կալիֆորնիայի կառավարության օրենսգրքի 6253), և դրանք կարող են ձեռք բերել լրատվամիջոցները և հանրությունը: Հանրային գրառումները, ի վերջո, ապահովում են կառավարության և այլ հաստատությունների պատասխանատվության ենթարկելու թափանցիկությունը և օգնում են համայնքների համար առաջնահերթությունների սահմանմանը: Խնդրում ենք նկատի ունենալ, որ մերձավոր ազգականների լուսանկարները և կոնտակտային տվյալները ներառված չեն գեկույցում:

Վարչաշրջանի տնօրինում (դիակիզում).

Եթե մահացածի ինքնությունը մնում է անհայտ, մերձավոր ազգականը չի կարող գտնվել, չի ցանկանում կամ ի վիճակի չէ կազմակերպել դիակիզումը, Վարչաշրջանը մարմինն ուղարկում է դիակիզման: Մահացածի ընտանիքը կամ հարազատները դիակիզման օրվանից մինչև երկու (2) տարի ունեն մոխիրը (կամ դիակիզված մարմինը) պահանջելու համար: Խնդրում ենք հետևել ստորև նշված քայլերին.

Քայլ 1.

Մահացածի մերձավորները պետք է տպեն և լրացնեն Վարչաշրջանի տնօրինման փաստաթղթերը, որոնք կարելի է գտնել առցանց՝ me.lacounty.gov/forms կայքում: Ձևաթղթերը վերադարձրեք Վարչության ծանուցումների բաժին փոստով, էլիփոստով (notifications@me.lacounty.gov) կամ ֆաքսով՝ (323) 222-0343:

Երբ մոխիրը առաքվի Լոս Անջելես վարչաշրջանի դիակիզարան (գործարկվում է Հանրային առողջության վարչության կողմից), վարչությունը փոստով կտեղեկացնի մահացածի մերձավորներին, որ դիակիզված մարմինը պատրաստ է վերցնելու համար:

Քայլ 2.

Ստացեք տնօրինման թույլտվություն: Եթե մահը տեղի է ունեցել Լոս Անջելես վարչաշրջանում կամ Լոնգ Բիչ կամ Փասադենա քաղաքներում, խնդրում ենք ստանալ Ձեր տնօրինման թույլտվությունը համապատասխան առողջապահական վարչությունից: Տնօրինման թույլտվությունը կարելի է ձեռք բերել անձամբ՝ հետևյալ գրասենյակներում հանդիպում նշանակելու միջոցով.

- Լոս Անջելես վարչաշրջանի հանրային առողջության վարչություն՝ (213) 288-7816
- Լոնգ Բիչի առողջապահության վարչություն՝ (562) 570-4305
- Փասադենայի առողջապահության վարչություն՝ (626) 744-6009

Քայլ 3.

Ներկայացրեք տնօրինման թույլտվությունը վարչաշրջանի դիակիզարան: Դուք պետք է դիակիզման վճարը վճարեք ճշգրիտ կանխիկով, չեկով կամ կրեդիտ քարտով: Լոս Անջելես վարչաշրջանի դիակիզարանը գտնվում է Լոս Անջելես վարչաշրջանի գլխավոր հիվանդանոցում:

- LA County General Hospital, 2051 Marengo St. IPT Bldg., 1st floor, RM C1G100, Los Angeles, 90033
- Հեռախոս՝ (323) 409-7161

Քայլ 4.

Վճարումը ստանալուց հետո Ձեզ կտրամադրեն ցուցումներ՝ Լոս Անջելես վարչաշրջանի դիակիզարանից/ գերեզմանոցից դիակիզված մարմինը պահանջելու համար: Հասցեն հետևյալն է՝ 3301 East 1st Street, Los Angeles, 90063: